Հավելված 5
Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի
որակավորման հանձնաժողովի
«21»02. 2017թ. թիվ 3 որոշման

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) դեպարտամենտի պետական ծառայողների (այսուհետ՝ Ծառայող) 2017թ. վերապատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը, ժամկետները և ժամանակացույցը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է Կոմիտեի նախագահի 2017 թվականի փետրվարի 27-ի թիվ 29-Լ հրամանի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է Ծառայողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանը՝ հետևյալ ոլորտներում. քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայություն, գործավարություն և փաստաթղթաշրջանառություն, ժամանակի կառավարում:

4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:

5. Ուսումնառության ժամաքանակը նախատեսվում է 32 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է մեկ շաբաթ ժամկետով (ներառյալ՝ 4 օր դասընթացները) և ավարտվում է վերապատրաստման արդյունքների գնահատմամբ:

6. Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ միասնական քննությամբ:

7. Ծառայողների վերապատրաստման ժամանակացույցը սահմանվում է 2017 թվականի մարտ-ապրիլ ամիսները:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	IS-J-019-17	ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության հարցերը	12
2.	IS-G-019-17	Գործավարությունը և փաստաթղթաշրջանառությունը ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում	12
3.	IS-G-006-17	Ժամանակի կառավարում	8

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. IS-J-019-17. ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է Կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու համար:

Դասընթացը ներառում է Կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության նորմատիվ իրավական կարգավորումը, Կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողի վարքագծի կանոնները, կադրային քաղաքականության առանձնահատկությունները: Մասնավորապես, դասընթացի շրջանակներում ներկայացվելու և պարզաբանվելու են «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքների, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության վերաբերելի իրավադրույթները:

2. IS-G-019-17. Գործավարությունը և փաստաթղթաշրջանառությունը ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում

Դասընթացն անհրաժեշտ է Կոմիտեի դեպարտամենտում փաստաթղթաշրջանառության հիմնադրույթների և ընթացակարգերի վերաբերյալ գիտելիքներ և հմտություններ հաղորդելու համար:

Դասընթացը ներառում է Կոմիտեի դեպարտամենտում գործավարության հիմնական գործառույթները և փաստաթղթաշրջանառության հիմունքները: Մասնավորեպես, դասընթացի շրջանակներում ներկայացվելու և պարզաբանվելու են «Գործավարության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1077-Ա որոշմամբ և ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի համապատասխան ներքին ակտերով սահմանված վերաբերելի ընթացակարգերը:

3. IS-G-006-17. Ժամանակի կառավարում

Դասընթացն անհրաժեշտ է ժամանակի արդյունավետ պլանավորման, կառավարման, ինչպես նաև անձնական և մասնագիտական կազմակերպվածության մակարդակի բարձրացման մասին գիտելիքների և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է ժամանակի և նրա նշանակության մասին հասկացությունը, ժամանակը՝ որպես անձի էներգետիկ պոտենցիալ, ժամանակի տեսակները, ժամանակի ընկալման տեսակները, գործունեության կառուցվածքը և դրա ժամանակային բնութագրիչները, մարդը և ժամանակը ճգնաժամային իրավիճակներում, մասնագետի ժամանակային իրազեկություն, ժամանակի հիմնական «թակարդները», ժամանակի կորստի և ժամանակային նախապատվությունների վերլուծություն, ժամանակաճշտում, ժամանակի կառավարման սկզբունքներն ու ռազմավարությունները, գլոբալ նպատակների որոշումը, երկարաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը, կարճաժամկետ և օպերատիվ պլանները, նախապատվությունների որոշումը ABC վերլուծության միջոցով, Էյզենհաուերի սկզբունքը: